

Ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային և երիտասարդության կենտրոնի ճանաչումն արդեն վաղուց դուրս է եկել մայրաքաղաք Թբիլիսիի ու Վրաստանի սահմաններից: Մայրենի լեզվով ազգային կենտրոնի գործունեությանը մոտիկից ծանոթանալու և համագործակցության կապեր հաստատելու նպատակով Թբիլիսի էր ժամանել Երևանի Շեն-Գավիթ վարչական շրջանի մշակույթի բաժնի պատվիրակությունը պատանեկության ստեղծագործական կենտրոնի տնօրեն, «Pro Pouz» կենդանիների բարեկեցության բարեգործական ընկերության Հայաստանյան կենտրոնի ղեկավար Նարե Արամյանի գլխավորությամբ:

2017 թվականի մայիսի 6-ին Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային և երիտասարդության կենտրոնում կայացավ հանդիպում մայր հայրենիքից ժամանած հյուրերի հետ:

Վիրահայոց թեմի մշակույթի բաժնի տնօրեն Լևոն Չիդիլյանը պատվիրակության անդամներին ներկայացրեց «Հայարտուն» կենտրոնը, ծանոթացրեց կենտրոնի

1 / 4



Ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր

գործունեության նպատակներին, կարևորելով Վրաստանում մայրենի լեզվի տարածման, ազգային մշակույթի զարգացման, ժողովրդական ավանդույթների պահպանման, հայ երեխայի հայեցի դաստիարակության ուղղությամբ աշխատանքները:

Այնուհետև «Հայարտուն» կենտրոնի և Շեն-Գավիթի պատանեկության ստեղծագործական կենտրոնի միջև ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր, որը կդառնա անմիջական կապերը, փորձի փոխանակումը, պաշտոնական և գործնական պատվիրակությունների միջոցով տարբեր ոլորտներում համագործակցությունը զարգացնելու հարթակ: Հուշագիրը ստորագրեցին «Հայարտուն» կենտրոնի ղեկավարը և Շեն-Գավիթի պատանեկության ստեղծագործական կենտրոնի տնօրենը:

Տեսնելով «Սուրբ Գրիգոր Նարեկացի» մայրենիի ուսուցման վարժարանի դասը, ունկնդրելով «Ներսես Շնորհալի» երգչախմբի կատարումը, «Սուրբ Մովսես Խորենացի» նախակրթարանի երեխաների խաղն ու վարժանքը հյուրերը միանշանակ ընդգծեցին տեսածի՝ լսածից զորեղ լինելը և իրենց աշխատանքում դրսևորած ազգային մեծ նվիրումի համար Թեմի կրթական բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանին և «Սուրբ Ներսես Շնորհալի» երգչախմբի խմբավար Մարիա Աբուլյանին հանձնեցին շնորհակալագրեր:

«Pro Pouz» կենդանիների բարեկեցության բարեգործական ընկերության ուսուցչուհիներ Ալլա Արզումանյանը և Կարինե Փանոսյանը նախակրթարանի սաների և երգչախմբի անդամների համար անցկացրեցին կենդանիների հետ ճիշտ վարվելու, նրանց իրավունքները իմանալու բնասիրական դաս-վարժանք:

Պատվիրակության կազմում էին շրջանի մշակույթի բաժնի ներկայացուցիչ Արաքսյա Լևոնյանը և տեխնիկական սպասարկող Մարինե Շահինյանը: Հյուրերին ուղեկցում էր Վրաստանի կենդանիների իրավունքների կոմիտեի անդամ Թինաթին Ճավճանիձեն:

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ «ՀԱՅԱՐՏՈՒՆ»
ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Պատանեկության ստեղծագործական կենտրոնը՝ ի դեմս տնօրեն Նարե Արամյանի, և Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի, կրթության և երիտասարդության կենտրոնը՝ ի դեմս տնօրեն Լևոն Չիդիլյանի, համագործակցության ծրագրի շրջանակներում կնքեցին սույն Համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Պատանեկության ստեղծագործական կենտրոնը և Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի, կրթության և երիտասարդության կենտրոնը, հաստատում են իրենց պատրաստակամությունը նպաստելու և համապատասխան պայմաններ ստեղծելու անմիջական կապերի, փորձի փոխանակման, պաշտոնական և գործնական պատվիրակությունների, փոխայցելությունների միջոցով զարգացնելու գործնական համագործակցությունը տարբեր ոլորտներում:

- Կիրականացվեն կրթության, մշակույթի, սպորտի, սոցիալական ապահովության և առողջապահության բնագավառներում համագործակցությանը և փորձի փոխանակմանն ուղղված փոխայցելություններ, երկուստեք կստեղծեն բարենպաստ պայմաններ տարբեր մակարդակներում և տարբեր ձևաչափերով համատեղ ծրագրերի մշակման և իրականացման համար:
- Կողմերը կմասնակցեն սույն Հուշագրի իրականացման աշխատանքներին, կազմակերպած հանդիպումներին, քննարկումներին և միջոցառումներին:
- Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, 2 օրինակից :

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՇԵՆԳԱՎԻԹ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ
ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
«ՀԱՅԱՐՏՈՒՆ» ՄՇԱԿՈՒՅԹԻ,
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մայիս 2017թ.

HAYARTUN

2 / 4













Ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր

ՀԱՅԱՐՏՈՒՆ

3 / 4



Ստորագրվեց փոխհամագործակցության հուշագիր

4 / 4